



ԼՐԱՏՈՒ

ԹիՒ 4 - Յուլիս 2023



70 տարի է առելի՝ Սերունդների Հայեցի Դաստիարակություն



Տնօրէնութեան Խօսքը



Ողջոյն բոլորին,

Ներկայ ուսումնական տարեշրջանը մեր ուսանողներուն համար բերքատու եւ արգասաբեր տարի մըն էր, որուն ընթացքին մենք նկատեցինք ուսուցման բարելաւում բոլոր մակարդակներու վրայ: Այս ցոյց տուաւ մեր արդիւնաւէտ աշխատանքը՝ աջակցելու մեր ուսանողներուն: Ջերմապէս կը գնահատեն նաև բոլոր այն նոր ուսանողները, որոնք այս տարի միանալով մեր վարժարանին, արագօրէն ընտելացան իրենց շրջապատին եւ տարեկիցներուն: Հետեւաբար անոնք գերազանցապէս իրենք զիրենք դրսեւորեցին նաեւ դասարանէն դուրս:

Մենք՝ ամէն ջանք կը ներդնենք եւ կ'օգնենք իւրաքանչիւր աշակերտի որ ան կարենայ ձեռք բերել եւ զարգացնել համապատասխան հմտութիւններ բոլոր մակարդակներու վրայ, ինչպէս նաեւ բացայայտել իր վճռականութեան արժէքը, անոր մէջ քաջալերելու եւ խթանելու, եւ կրնամեի հոգեբանութիւնը: Աւելին, Վահան Թէքէեան վարժարանին մէջ, մենք կը քաջալերենք եւ կը խրախուսենք աշակերտին մէջ թրծել պատկանելիութեան զգացումը:

Պատկանելիութեան զգացում ունեցող աշակերտը յաղթահարելով զանազան դժուարութիւններ, կրնայ հասնիլ ուսման յաջողութեան: Վահան Թէքէեան վարժարանէն ներս մեր դռները միշտ բաց են մեր աշակերտութեան առջեւ, նոր կարելիութիւններ ստեղծելու անոնց համար:

Ի յաւելումն մեր ակադեմական յաջողութիւններուն, ստեղծագործական եւ քննադատական մտածողութեան խթանման, նաեւ կը քաջալերենք ազնուութեան, յամառ աշխատականութեան եւ յարգանքի եւ այլ արժէքներու ուսուցման ներգրաւումը որակեալ կրթութեան տարածման մէջ:

Որպէս մանկավարժներու խմբակ մեր ուժերը կը ներդնենք պատրաստելու համար մեր ապագայ առաջնորդները: Մենք անդադար կը հզօրացնենք ու կը զարգացնենք մեր ուսանողներուն գիտելիքներն ու հմտութիւնները, մեր աշխարհը աւելի լաւ դարձնելու համար:

Հպարտութեամբ կը տեղեկացնենք, թէ մեր Մանկապարտէզի բաժինը պիտի արդիականացուի և վերանորոգուի: Սէմ և Սիլվա Սիմոնեան Տիպար Մանկապարտէզի վերաբացումը պիտի նշուի 2023-24 ուսումնական տարեսկզբին:

Անհամբեր կը սպասենք յաջորդ տարուան ուսումնական պտղաբերումին:

Ձեր բոլորին կը մաղթեմ քաջառողջութիւն եւ արեւշատութիւն:

Ջերմ մաղթանքներով՝
Սեւանա Սեմերճեան Տարագճեան
Տնօրէնուհի



Ամփոփ տեղեկագիր Վահան Թէքէեան Միջն. Վարժարանի ծրագիրներուն եւ գործունէութիւններուն

Կրթական Գործունէութիւններ:

Նկարագիրի Կերտման Ծրագիր



Համբերութիւն

Ինքնակարգապահութիւն



Հանդուրժողականութիւն





Բազմապատկման Վարպետներ

Ամիսներու ընթացքին բազմապատկման աղիսակը սորվելէ ետք, 2-րդ դասարանի աշակերտները ստացան համապատասխան վկայականներ: Սրտանց շնորհակալութիւն կը յայտնենք ուսողութեան ուսուցչուհի՝ Օրդ Սեդա Պազալեանին:



Ծաղիկ Դասարանը Հպարտ Քայլերով Կ'ուղղուի Դէպի Նախակրթարան

Մանկապարտեզի աշակերտի մը համար դէպի նախակրթարան Ա. կարգ անցնիլը դիւրին ընթացք մը չէ: Ուստի՝ այն հեզասահ ուղիի մը մէջ դնելու եւ անոնց նախապատրաստելու ուղղութեամբ, մեր Մանկապարտեզի Ծաղիկ դասարանի փոքրիկները առիթը ունեցան բարձրանալու Նախակրթարանի Ա. դասարան, մօտէն տեսնելու եւ ծանօթանալու համար յաջորդ տարուան իրենց դպրոցական օրերը:



Լիբանանահայ Վարժարաններու

Միջ-աշակերտական Մտերմիկ Հանդիպում- Զրոյց

4 Ապրիլ 2023-ին, Ռաուտայի Մխիթարեան վարժարանի ներքնասրահէն ներս, տեղի ունեցաւ Լիբանանի հայկական վարժարաններու միջ-աշակերտական մտերմիկ հանդիպում զրոյց, որուն մեծ հաճոյքով նաեւ մաս կազմեց Վահան Թէքէեան Միջն. վարժարանի՝ Միջն. Գ. դասարանի աշակերտները: Սոյն ձեռնարկը կազմակերպած էր Լիբանանի մէջ Մխիթարեան Միաբանութեան հայերէնագիտութեան բաժանմունքը, նախագահութեամբ՝ Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Պր. Վահագն Աթաբեկեանի:





Առողջապահական Ընդհանուր Զնման Օր

Մարտ 7 2023-ին, մեր վարժարանը հիւրընկալեցինք բուժաշխատողներ՝ Հասարակական Զաստատություններ, որոնք կատարեցին ընդհանուր բուժզննումներ մեր բոլոր աշակերտներին:




Ուսուցիչի Վերադասարանում: Ընկերայնության Ուսուցման (SEL) Դասընթացը

Մարտ 10 2023-ին, մեր մանկապարտեզի, ինչպես նաև Ա. շրջանի եւ Բ. շրջանի դաստիարակները այցելեցին Social-Emotional Learning (SEL) hub (Ընկերայնության Ուսուցման) կեդրոն, ուր հետեւեցան նշեալ կեդրոնի տրամադրած դասընթացներին: Մեր անկեղծ երախտագիտությունը կը յայտնենք Դոկտ. Մէրի Ղազարեան-Կիրիւնեանին՝ իր փոխանցած արդիւնաւէտ գիտելիքներուն համար:



Նախագծային Հիմքով Լեզուի Դասաւանդում

Կազմակերպութեամբ՝ ՀԲԸՄ Վարժարաններու, Երեքշաբթի, 11 եւ Չորեքշաբթի, 12 Ապրիլ 2023-ին, տեղի ունեցաւ սեմինար Նախագծային Հիմքով Լեզուի Դասաւանդում խորագիրով, որուն մասնակցեցան Լիբանանահայ վարժարաններ: Սոյն սեմինարին մեր վարժարանը ունեցաւ իր մասնակցութիւնը Հայերէն լեզուի ուսուցիչներով՝ Դաւար Գէորգեան, Ռիթա Թամուկեան եւ Աւետիս Տիպան:





Կրթական և Մշակութային Պտոյտներ:

Այցելութիւն Հանածոներու "MIM" Թանգարանի

Թանգարաններու մէջ կը ցուցադրուին մշակութային, գիտական իրողութիւններ: 29 Մարտ 2023-ին, Նախ. Ա- Էն Նախ. Դ. դասարանի աշակերտները այցելեցին "MIM" թանգարան, St. Joseph համալսարանի մէջ: Անոնք ծանօթացան այլազան հանածոներու, բրածոներու եւ թանկագին քարերու:



Աշակերտներու Տպաւորութիւններ:

Մեծ ուրախութեամբ բարձրացայ հանրակառք, որովհետեւ դպրոցի աշակերտներով պիտի երթայինք ,MIM Ե թանգարան: Հոն տեսանք ձուկերու, օձերու եւ կրիաներու բրածոներ: Հետաքրքրութեամբ դիտեցինք ֆիլմ մը ու տեսանք, թէ ինչպէս թունաւորուեցան ձուկերը ու մեռան: Յետոյ մտանք սրահ մը ու տեսանք շատ գեղեցիկ գոյնզգոյն քարեր ու յախճապակի: Շատ ուրախ ժամանակ անցուցինք ու նոր բաներ տորվեցանք:

Արին Տարազճեան
Նախ.Բ. դասարան

Որքան հաճելի էր ,MIM Ե թանգարանի այցելութիւնը: Հոն, դիտեցինք ֆիլմ մը ու տեսանք, թէ ինչպէս ձուկերը, կրիաներն ու օձերը կը դառնան բրածոյ: Տեսանք նաեւ՝ թէ ինչ դժուարութեամբ մարդիկ լեռներէն կը հանեն հանածոներ, ինչպէս յախճապակի, ոսկի ու ադամանդ : Քանի մը ցուցասրահներ մտանք, ուր ցուցադրուած էին աշխարհի չորս կողմերէն բերուած թանկագին քարեր:

Ռալֆ Ապու Նատէր
Նախ.Գ. դասարան



Չորեքշաբթի 29 Մարտ 2023-ին, Նախակրթարանի առաջինն չորրորդ դասարանի աշակերտներս մեր դաստիարակներուն ընկերացութեամբ՝ հանրակառքով զացինք ,MIMԵ թանգարան: Թանգարանը կը բաղկանար քանի մը ցուցասրահներէ: Նախ մտանք բրածոներու բաժինը, ուր տեսանք ձուկերու, կրիաներու եւ օձերու գեղեցիկ բրածոներ: Ուրիշ ցուցասրահի մը մէջ՝ դիտեցինք հետաքրքրական վաւերագրական ֆիլմ մը հանաճոներու մասին, ինչպէս՝ յախճապակի, ոսկի, ադամանդ, զմրուխտ եւ այլն: Շատ հաճելի դաս-պտոյտ մըն էր:

Սոնիա Քէլիսաչեան
Նախ.Դ. դասարան

Գորգագործութիւն (Քիլիմ)

Մեր վարժարանի Միջն. Բ. դասարանի աշակերտները հաճոյքով մասնակցեցան Զայկազեան Համալսարանի, համագործակցութեամբ՝ Հայաստանի Յովհաննէս Շարամպէեանի Ազգային Արուեստի թանգարանին կողմէ կազմակերպուած տասնօրեայ գորգագործութեան (Քիլիմ) դասընթացքներուն, որուն աւարտին, ցուցահանդէսի ընթացքին անոնք ստացան յատուկ հաւաստագիրներ:





Այցելություն ԳՈՐԱՐ Գրադարան

Պեյրուֆի Վահան Թեքեան Միջն. վարժարանի Միջն. Բ. և Գ. դասարանի աշակերտները, 4 Ապրիլ 2023-ին այցելեցին ,ԳՈՐԱՐԵ գրադարան: Մեր խորին շնորհակալությունը կը յայտնենք Տիար՝ Յարութ Խաչատուրեանին, մեզ սիրալոծար ու սրտաբաց ընդունելութեան համար, ինչպէս նաեւ Տիար՝ Կարօ Տէրունեանին:





Աշակերտներու Տպաւորութիւններ:

Ապրիլ 3-ին այցելեցինք ԳՈՅԱՐ գրադարան: Հոն ծանօթացանք հայկական մշակոյթին եւ երգարուեստին: Ինծի համար այցելութեան ամենահետաքրքրական մասը հին գիրքերու վերանորոգումն էր: Այդտեղ տրվեցայ գիրքերու վերանորոգման ընթացակարգը՝ կազմելէն մինչեւ կազմի վրայ խորագիրի տպագրումը:

Սելենա Քէսէեան
Միջն. Բ. դասարան

Երկուշաբթի 3 Ապրիլ 2023-ի առաւօտեան, այցելեցինք ԳՈՅԱՐ գրադարան: Առաջին անգամ ըլլալով ականատես եղայ հայ մշակոյթի ու երաժշտութեան առնչուած այլազան գիրքերու: Սորվեցայ նաեւ, թէ ինչպէս թերթերը միացնելով, կարելով՝ կը կազմեն գիրքերը ու անոնց վրայ տառեր կը տպեն:

Մարի Զլէր Նալչաճեան
Միջն. Գ. դասարան

Այցելութիւն Արամ Պէգիբեան Թանգարան

26 Ապրիլ 2023-ին, Նախ. Ե. -էն Միջն. Գ. դասարանի աշակերտները՝ վարժարանիս Տնօրէնուհի՝ Տիկ. Սեւանա Սեմերճեան Տարագճեանի եւ ուսուցչական կազմին հետ այցելեցին Ժպէլլի Արամ Պէգիբեան թանգարան: Անոնք ծաղկեպսակ զետեղեցին որբերու մայր՝ Տանմարգացի Մարիա Զէյքըպսընի դամբարանին վրայ, որմէ ետք մտան թանգարան, ուր թանգարանի տնօրէն՝ Տիար Գրիգոր Ալոզեան մանրամասն տեղեկութիւններ փոխանցեց մեր աշակերտներուն, որոնք յուզումով ոնկնդրեցին ու դիտեցին հոն տեղադրուած վաւերագրական պատկերները: Ապա, ուղղուելով դէպի թանգարանին պատմական պարտէզը՝ մեր աշակերտները ներկայացան պատշաճ յայտագիրով մը՝ յարգելու համար Մեծ Եղեռնի սրբադասուած նահատակներուն յիշատակը:

Անոնք շատ տպաւորուած էին բարերարներ Ալեքո և Անի Պէգիկեաններու կողմէ ձեռնարկուած մեծ ծրագրով, որոնք այս իւրայատուկ թանգարանը անուանեցին իրենց հօր՝ Տիար Արամ Պէգիկեանի անունով, որ թանգարանի որբերէն էր:





Աշակերտներու Տպաւորութիւններ:

Չորեքշաբթի, 26 Ապրիլ 2023-ին այցելեցինք
Ժպէլլի Հայոց Ցեղասպանութեան որբերու
Պէգիբեան թանգարան: Հոն՝ ականատես
եղանք Մեծ Եղեռնի մէկ ու կէս միլիոն
նահատակներու յուզիչ պատկերներուն եւ
կեանքի հանգրուաններուն:

Ծերոն Մահտէսեան
Նախ. Ե. Դասարան

Եւ ահա կը մտնենք Ժպէլլի Հայոց
Ցեղասպանութեան որբերու Պէգիբեան թանգարանէն ներս. անցնելով որբերու
ոտնահետքերու վրայէն: Անբացատրելի տրտմութիւն մը կայ մէջս: Ուզեցի ծունկի գալ եւ
մէկառմէկ շօշափել այդ ոտնահետքերը, որոնց տէրերը առանց կօշիկի ծամբայ
կտրեցին՝ հասնելով Լիբանան:
Երբ ներս մտանք, ինծի ընկերակցած մնացին որբերուն ձայները: Ցուցադրուած
նկարները բաւարար էին զայրոյթս գագաթնակէտին հասցնելու:
108 տարիներ արդէն անցած են, բայց տակաւին մեր պահանջատիրութիւնը կը
շարունակուի:

Աղասի Փափազեան
Նախ. Զ. Դասարան



Չորեքշաբթի, 26 Ապրիլ 2023-ին այցելեցինք Ժպէլլի Հայոց Յեղասպանութեան Որբերու Արամ Պէգիքեան թանգարան՝ ոգեկոչելու համար Հայոց Եղեռնի 108 ամեակը: Հոն ծաղկեպսակ զետեղեցինք, ինչպէս նաեւ լուսանկարուեցանք որբերու մայր՝ Մարիա Ճէյքըպսընի դամբարանին առջեւ: Թանգարանէն ներս ականատես եղանք մեր պատմութեան ցաւալի էջերու լուսանկարներուն:

*Պերճ Գոմպէճեան
Միջն. Ա. Դասարան*

Չորեքշաբթի, 26 Ապրիլ 2023-ին այցելեցինք Ժպէլլի Հայոց Յեղասպանութեան Որբերու Արամ Պէգիքեան թանգարանը: Հանազան երեւոյթներու կողքին՝ զիս տպաւորեց առաստաղէն կախուած զանգակը, որ չունէր բլթակ եւ կը խորհրդանշէ հայոց անլսելի ծայնը, որուն պատճառով տեղի ունեցաւ 20-րդ դարու մեծագոյն ցեղասպանութիւնը:

*Նենսի Ֆայատ
Միջն. Բ. Դասարան*

26 Ապրիլ 2023-ին այցելեցինք Ժպէլլի Հայոց Յեղասպանութեան Որբերու Արամ Պէգիքեան թանգարանը: Հիս ամենաշատը տպաւորեց թանգարանի մուտքի զետնի ոտնահետքերը: Այդ հետքերուն մէջ այնքան մեծ պատմութիւն կայ: Թանգարանին մէջ ամէն մէկ քայլափոխիս, շատ հետաքրքրական, ու ցաւալի նկարներով լի տեղեկութիւններ կային:

*Ալիք Ազնաւուր
Միջն. Գ. Դասարան*

Այցելութիւն Անթիլիասի Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ Մայրավանք

Հայոց Յեղասպանութեան Ոգեկոչում
Ապրիլ -2023 25ին, Անթիլիասի Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ Մայրավանքի շրջափակին մէջ տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեան 108 ամեակի աշակերտական ոգեկոչում, մասնակցութեամբ՝ Լիբանանահայ վարժարաններու աշակերտութեան, որուն մաս կազմեցին նաեւ՝ Պէյրութի Վահան Թէքէեան վարժարանի Միջնակարգի աշակերտները:





Այցելություն Տոքթ. Ճէնի Թոմասեանի Քլինիքը

12 Մայիս 2023ին, Վահան Թէքէեան վարժարանի մանկապարտէզի Կոկոն եւ Ծաղիկ դասարաններու փոքրիկներուն առիթ ընծայուեցաւ այցելելու "Dr. Jenny's Natural Smile Clinic"-ը, ուր Տոքթ. Ճէնի Թոմասեան մեծ հաճոյքով արժէքաւոր գիտելիքներ փոխանցեց մեր հոգեհատորներուն: Ան աշակերտներուն ատամները քննեց:



Այցելություն Պուրժ Համուտի Հրշէջներու Կայարան

18 Մայիս 2023-ին, մեր մանկապարտէզի Բողբոջ, Կոկոն եւ Ծաղիկ դասարաններու աշակերտները, իբրեւ դաս-պտույտ՝ մեծ հաճոյքով ուղղուեցան Պուրժ Համուտի հրշէջներու կայարանը: Անոնք դիտեցին կրակային ցուցադրութիւն:





Այցելություն Տոթթ. Վարուժան Մարկոսեանի քլինիքը

Վահան Թեքեան վարժարանի մանկապարտեզի Բողբոջ դասարանի հոգեհատորները, 24 Մայիս 2023-ին, այցելեցին Տոթթ. Վարուժան Մարկոսեանի "քլինիք"ը: Ան քննեց բոլորը եւ շեշտեց առողջապահության կարելիությունը:



Հանգանակություն:

Հալեպի մէջ տեղի ունեցած աղետալի երկրաշարժը իր բացասական ազդեցութիւնը ունեցաւ Հալեպահայ մեր քոյր-եղբայրներուն վրայ: Արդարեւ, անոր արձագանգը հասաւ նաեւ Լիբանան: Պէյրութի Վահան Թեքեան Վարժարանի աշակերտութիւնը մօտէն տեղեկանալով տխուր պատահարին եւ անոր՝ Թեքեանի շրջանակին մօտ ձգած հոգեբանական տխուր ազդեցութեան, եւ հակառակ Լիբանանէն ներս եւս տեղի ունեցած տնտեսական ճգնաժամին՝ կազմակերպեց :հանգանակութիւն մը, թեթեւցնելու համար Հալեպահայութեան կարիքները

Մեր վարժարանին աշակերտութիւնը իրենց սրտաբուխ մասնակցութիւնը կատարեցին՝ կարեկցելով իրենց Թեքեանական քոյր եղբայրներուն հետ եւ առ այդ իրենց հանգանակած գումարը ղրկեցին Հալեպ:

Աշակերտի Տպաւորութիւն:

Հեռատեսիլէն սարսափով դիտեցի Սուրիոյ մէջ պատահած աղետալի երկրաշարժը, փլած շէնքերը, ձմրան ցուրտին անտուն մնացած հայերը, որոնք զրկուեցան կեանքի շնորհած բարիքներէն: Երբ դպրոցս հանգանակութիւն կազմակերպեց՝ ուզեցի ես ալ օգնութեան հասնիլ սուրիահայ փոքրիկներուն եւ պատանիներուն:

Մասնակցութիւն բերի նաեւ Զուարթնոցի թերած հայորդիներուն նուիրուած հանգանակութեան, մաղթելով թեթեւցնել անոնց դժուարութիւնները:

Տիգրան Հաւաթեան
Նախ. Դ. դասարան



Տարբեր Տոնակատարություններ:

Ուսուցչաց Տոն

8 Մարտ 2023ին, նշեցինք ,Ուսուցչաց
Տոնը գնահատելով ուսուցիչներին
անսակարկ նուիրումը:



Գարնան Առաջին Օրը

21 Մարտ 2023-ին, մեր
աշակերտները ուրախ
մթնոլորտի մը մէջ նշեցին
Գարնան առաջին օրը:





Զատկուան Տօնակատարութիւն

5 Ապրիլ 2023-ին, Զատկուան տօնին առիթով մեծ տօնախմբութիւն էր մեր վարժարանին մէջ:

Շնորհակալութիւն բոլոր մեր նուիրատուներուն, յատկապէս մեր շրջանաւարտներուն՝ Օրդ. Անի եւ Թալին Աւագեաններուն:





Վերջին Զանգ

31 Մայիս 2023-ին, մեր վարժարանի Յակոբ Պարսամեան սրահին ներս ձուխ յայտագիրով նշուեցաւ Միջն. Գ. դասարանի, Վերջին Զանգը:



Մարզական Օր

9 Յունիս 2023-ին, ունեցանք մեր տարեկան Մարզական Օրը՝ մեծ խանդավառութեամբ եւ բազմազան խաղերով լի:



Ձեռնարկներ:

Բարեւ Գարուն Ձեռնարկ


29 Մարտ 2023-ին՝ մեր վարժարանի Յակոբ Պարսամեան սրահին ներս տեղի ունեցաւ, Բարեւ Գարուն խորագիրով գեղարուեստական ծովս ու հաճելի յայտագիր մը, պատրաստուած մանկապարտէզի փոքրիկներուն կողմէ, որ արժանացաւ բարձր գնահատանքի:





Մայրերու Օրուայ Ձեռնարկ

29 Մայիս 2023-ին, վարժարանիս Տնօրէնութիւնը՝ հովանաւորութեամբ Հոգաբարձութեան եւ օժանդակութեամբ Ծնողաց յանձնախումբի ժրաջան մայրերուն, կազմակերպեցին նախաճաշ-հանդիսութիւն "Մայրերու Օր"-ուան առթիւ, նախագահութեամբ՝ Տիկ. Հրաչի Շիրտմեանի: Ուրախ մթնոլորտ կը տիրէր, յատկապէս երբ աշակերտները հանդէս եկան գեղեցիկ պարերով: Բոլոր ներկաները հնարաւորութիւնը ունեցան դիտելու իւրաքանչիւր աշակերտի ձեռնային աշխատանքները:





Արտադասարանային Գործունեություններ



Շախմատ
Տոքթ. Ճեօրծ Կիլեւէրեան



Դերասանական Արուեստ
Կարէն Տարազձեան

Կողովագնդակ
Տիգրան Գալայձեան

Մեր դաս-խաղի վրայ հիմնուած գործունեությունները:





Ամավերջի Հանդես ու Վկայականաց Բաշխում:

Շաբաթ 1 Յուլիս 2023, երեկոյան ժամը 5:00-ին, "Յակոբ Պարսամեան" սրահին ներս տեղի ունեցաւ 2022-2023 տարեշրջանի ամավերջի միացեալ հանդէսն ու վկայականաց բաշխումը:

Այս տարւոյն հունձքը նուիրուած էր Թէքէեան Մշակութային Միութեան յայտնի ղեկավար, Ազգային գործիչ ու մտաւորական՝ հանգուցեալ "Երուանդ Ազատեան"-ի՝ յարգելու համար Անոր անմար յիշատակը:

Աշակերտները հանդէս եկան գեղարուեստական պատշաճ յայտագիրով մը, որմէ ետք ընթացք առաւ վկայականաց բաշխման արարողութիւնը:







ՎԱՀԱՆ ԹԷԹԷԿԵԱՆ ՄԻՋՆ. ՎԱՐԺԱՐԱՆ

Յաջորդաբար
4-րդ տարին ըլլալով
2023-2024 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ

**ԿՐԹԱԹՈՇԱԿԸ
ԿԸ ՄՆԱՅ ԱՆՎՃԱՐ**



- ✓ **Հայեցի եւ Ազգային Դաստիարակութիւն**
- ★ Նկարագիրի Կերտման Ծրագիր
- ✓ **Կեանքի Հմտութիւններ**
- ★ Աշակերտակեդրոն Ուսուցում
- ✓ **Արտադասարանային Բազմազան Ծրագիրներ**
- ★ Արդի Արհեստավարժութեան Կիրառում
- ✓ **STEAM**
- ★ Հոգատար Միջավայր

Արձանագրութիւնները կը շարունակուին
Սեպտեմբեր 5 -էն սկսեալ՝
Երկուշաբթիէն Ուրբաթ ժամը **9-12**

ՎԵՐԱՄՈՒՏ

Պրէսվէ՝	Սեպտեմբեր 20
Նախ.- Միջն.՝	Սեպտեմբեր 28
Մանկապարտէզ՝	Հոկտեմբեր 4
Մանկամսուր՝	Հոկտեմբեր 9



01/260525 - 01/260574



info@vahantekeyan.com



www.vahantekeyan.com



Շնորհակալագիր

Մեր վարժարանի Հոգաբարձության եւ Տնօրէնութեան անունով կը փափաքինք մեր անկեղծ երախտագիտութիւնը յայտնել, յատկապէս՝ Լիբանանի Թէքէեան Մշակութային Միութեան (ԹՄՄ) Հիմնադիրներու Մարմնին, մեծ բարերարներ՝ Տէր և Տիկ. Սէմ և Սիլվա Սիմոնեաններուն, Սոհիկեան Հիմնադրամին, ԹՄՄ ԱՄՆ-ի եւ Գանատայի Կեդրոնական Վարչութեան, ԹՄՄ Մեծն Նիւ Եորքի մասնաճիւղին, ԹՄՄ Արեւմտեան Ափի մասնաճիւղին, ԹՄՄ Լիբանան, ՀԲԸՄ-ին, Հայաստանե Համահայկական Հիմնադրամին, Ռամկավար Ազատական Կուսակցութեան, Հաուրդտ Գարակէօզեան Հաստատութեան, ինչպէս նաեւ մեզի օժանդակող բոլոր այլ կազմակերպութիւններուն, անհատ բարերարներուն եւ շրջանաւարտներուն՝ Պէյրութի Վահան Թէքէեան Միջն. վարժարանին իրենց շարունակական աջակցութեան համար:

Վերջապէս, կարելի է յայտարարել, որ մեր նուիրատուներն ու աջակիցները, անկասկած, կարելոր մեծ դեր կը խաղան մեր յաջողութեան և կայունութեան գործընթացին մէջ:

Մենք չէինք կրնար յաջողիլ առանց ձեր անվերապահ նեցուկին:

Ի սրտէ մեծ շնորհակալութիւն:

Վահան Թէքէեան Վարժարանի Հոգաբարձութիւն եւ Տնօրէնութիւն





Email: info@vahantekeyan.com
Website: www.vahantekeyan.com
Facebook: Vahan Tekeyan School in Lebanon
Instagram: [vahan.tekeyan](https://www.instagram.com/vahan.tekeyan)
Phone number: 01/260525 - 01/260574